

ՌՈՒԲԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ

IV

Տիկ. ԱՆՈՒՇԻ ՆԽԻՌԱԾ ԶԵՆՔԵՐԸ ԵՒ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՉԱՆԵԱՆԸ

Ամբողջ 1891 թ. Հնչակի կենարոնը զէնքի հարցով էր մտահոգւած։ Գալիս էին Պոլսից, Բուլղարիայից եւ Յունաստանից յեղափոխական զգացմունքներով վառած երիտասարդներ ու միջին տարիքաւորներ, մնում էին մէկ - երկու շաբաթ ժընեւում, իւրացնում էին թրքահայ դաւառների համար յատուկ պատրաստած «ներքին ծրագիրը ու յեղափոխականի առաջին քայլերը» եւ ուղեւորւում էին դէպի թրքահայ դաւառները. շատերը կեղծ, իսկ մի քանիսը մինչեւ իսկ յոյն, բուլղար կամ պարսկահայի անցագրերով։

Առաջին շրջանում, սովորաբար, անյաջողութիւնների չէին պատահում։ Պէտք է ասած, որ ոչ մէկը երբեք չէր փորձում իւր հետ տանել գէթ մի ասորմանակ։ Զէնքի հարցը վերին աստիճանի դժւար էր եւ բարդ։ Որոշած էր, նախ թրքահայ դլիսաւոր կենտրոններից ոկսած, տարածել դէպի շրջակայ գիւղերը եւ հայրանակ մանր քաղաքները յեղափոխական մասնաճիւղերի ցանցերը, ապա, երբ որոշ քանակութեամբ աչքբաց եւ քաջ երիտասարդներ գտնւին, տեղափոխել նրանց թիւրքիայի ծովափնեայ քաղաքները յատկապէս զէնքի գաղտնի ներմուծման համար։ Տեսականօրէն եւ թղթի վրա այդ բոլորը դժւար չէր, բայց իրականօրէն, եւ օրէցօր դժւարացող (կառավարական հետապնդումների պատճառով) պայմանները համարեա թէ զէրոյի էին հասցրած եւ այն պահին, եւ հետագայում զէնքի մատակարարման այդ ձեւը։ Բացի այդ, մինչեւ իսկ Եւրոպայում զէնքը ձեռք բերելու հարցը, այսինքն՝ գնելն ու թիւրքիայի սահմանները տեղափոխելը, կարգին ուսումնասիրւած չէր. բաւականաչափ գումարներ էլ չկային այդ բանի համար։ Ուստի, երբ տիկին Անուշը տաս հաղար ոուբլի (մօտաւորապէս հաղար անգլ.

ուկի) նորեց Հնչակին յատկապէս զէնքի համար, յեղափոխական կենտրոնը ա՛յնքան էր ոգեւորւած, որ թւում էր, թէ այդ հարցը արդէն պարզում եւ վճռում է: Մինչդեռ, հայ ժողովրդի ձեռքը զէնք հասցնելու հարցը, ե՛ւ որակի, ե՛ւ քանակի տեսակէտից, որքան ես գիտեմ, երբեք իր գոհացուցիչ իրականացումը չստացաւ ո՛չ այն ժամանակները, ո՛չ էլ երբ եւ է հետագայում: Մասնաւորապէս Տիկ. Անուշի առաջարկած զէնքի հարցը յանդաւ արկածի, կամ մի շարք արկածների:

Բեսարարիայի հարուստ կալւածատիրոջ այրի Տիկ. Անուշը եկել էր Ժընեվ իր տաս տարեկան որդու եւ որդու դաստիարակ քսան եւ երեք տարեկան ուսանող Արթուր. Օհանջանեանի հետ: Բարձրահասակ, 32 - 35 տարեկան, ոչ տգեղ, բայց ոչ էլ գեղուհի, ոսախօս կին էր. եռանդուն՝ խօսակցութեան մէջ, բարեկիրթ՝ շարժուձեւերով: Իւ. Խանազատն էր նրանց համոզել Օդեսսայում՝ որ զնան այցելեն Հնչակի կենտրոնը եւ, անձամբ ծանօթանալուց յետոյ յեղափախական գործի պահանջների հետ, առաջարկեն այն նույնը, որ անելու էր այրի Տիկ. Անուշը «ի յիշատակ իր հանդուցեալ ամուսնոյն եւ յօգուտ ազգային գործին»:

Ժընեւում Տիկ. Անուշը, որդին ու դաստիարակը մնացին մօտ մի շաբաթ ու մի քանի անգամ այցելեցին Նազարեէկեաններին: Ամէն քան, ի հարկէ, զգուշութեամբ էր արւում. մինչեւ իսկ, երբ Նազարեէկի տանը նստած՝ իր մտքերն էր արտայայտում տիկինը, աշխատում էր շատ թոյլ ձայնով խօսել, կարծես կողքի սենեակում ոռւս կամ թիւրք ոստիկանութիւնը նստած լինէր: Իր կարծիքներին մէծ նշանակութիւն տալով հանդերձ՝ յաճախ հարցնում էր հետի այցելող երիտասարդին՝ «այնպէս չէ», Պ. Օհանջանեան. կարծեմ դուք էլ այդ եղրակացութեան էիք եկել»:

Բարձրահասակ եւ գեղեցկադէմ Օհանջանեանը ախարքալաքցի էր. ուսանում էր Օդեսսայի համալսարանում, վարժ էր հայերէնում, մաքուր հագնեւած ու ա՛յնքան ծանր ու բառերը կշռած էր խօսում, որ լուրջ երիտասարդի տպաւորութիւն էր թողնում:

Տիկ. Անուշի զէնքի պատմութիւնը մի երկարաշունչ արկածալից պատմութիւն է, որին կարելի էր թերեւս յատկացնել «Հաղարումէկ գիշերներ» հէքեաթների մի գլուխը: Բայց ես պէտք է ասեմ միայն այն ինչ որ անձամբ տեսել եմ, գիտել եւ կամ լսել Նազարեէկից: Պատմութիւնը իր խիստ չափազանցրած, առասպելական երանդներն էլ է ունեցել, բայց փաստերը այսպէս էին ընթանում:

Տիկ. Անուշը առաջարկեց զէնքի համար տաս հաղար ոռւբլի. զէնքը (հրացանները եւ փամփուշտները) աւստրիական թէեւ հին ձեւի, բայց լաւ վիճակի մէջ, զինուրական պահեստից էր զնւելու. այն ժամանակայիշ փողով մօտ 7-8 ոռւբլի հատը, հաշւած այդ գնի մէջ եւ Վիեննայից մինչեւ աւստրիական ծովափնեայ թրիէսթ քաղաքը տեղափոխելու ճանապարհածախքը: «Դուք հասկանում էք, դիմեց Տիկ. Անուշը նաղարբէկին եւ սեղանի շուրջը նստողներիս, որ եթէ այդ առաջին փորձը յաջող անցնի, ես չեմ կանգ առնելու (խօսքը եւ այդ դարձածքը ոռւսերէն էր), որ նոյնքան եւ աւելի մեծ դումար յատկացնեմ Հայաստան զէնքի ներմուծման հարցին. մենք այդ մասին արդէն խորհած ենք Արթուրի հետ. ամէն ինչ նախատեսած եւ նախածրագրած է, այնպէս չէ՞», Պ. Օհանջանեան»:

Բայց Արթուրը (որ հետագայում Հնչակեան կուսակցութեան մէջ յայսնի եղաւ «Արտաւազդ» կեղծանունով) «ամէն բան» նախատեսած չէր: Նա չէր նախատեսած աւստրիական օրէնքները, ըստ որոնց, թէեւ զէնք ծախէն ու գնելը երկրի սահմաններում ազատ էր, ուրեմն եւ կարելի էր եւ Վիեննայից թրիէսթ քաղաքը բերել, բայց երկրից արտահանելն ու մի օտար երկիր տեղափոխելը պայմանաւորւած էր վերջինի կառավարութեան գրաւոր թոյլտւութեամբ: Օհանջանեանին էր յանձնւած զէնքը գնելը, թրիէսթ ու այնտեղից Յունաստան տեղափոխելը: Սակայն, այս վերջին պայմանը անկարելի էր դառնուում: Ճիշտ է, յունաց կառավարութիւնը, յոյն ժողովուրդը, մինչեւ իսկ յոյն քաղաքական գործիչները, մանաւանդ հին սերուղին պատկանողները ատում էին ամէն ինչ որ յիշեցնում էր թիւրք կառավարութիւնը, թիւրքի նախկին բռնութիւնները յոյն ժողովուրդի հանդէս. աւելին. յոյն հասարակական կարծիքը հայ աղպի, հայկական աղպային ձգտումների վերաբերմամբ միշտ ցոյց էր տալիս անկեղծ համակրանք եւ բարոյական աջակցութիւն: Բայց այդ այդպէս լինելով հանգերձ՝ յոյն կառավարութիւնը չէր կարող եւ չէր ուզում պաշտօնապէս գիտնալ, որ թրիէսթից Յունաստան ուզարկելիք զէնքը յատկացւած է հայ յեղափոխական կուսակցութեան համար, որը այդ զէնքը ներմուծելու է թիւրքիայի սահմաններից հայկական գաւառները: Զնայած, որ Ռ. Խանազարը Աթէնքում սերտ կապեր էր հաստատել մի քանի յոյն քաղաքական գործիչների, մասնաւորապէս ծերունի գօրալար եւ աղգային հերոս Բոցարիսի հետ, զէնքը անկարելի եղաւ ներմուծել Յունաստան, եւ այնտեղից թիւրքիա:

Անցնում էին ամիսներ եւ հարցը անշարժ վիճակի մէջ էր մը-

նում։ Թիրէսթ հասած ու ապրանքային ամբարներում իրար վրա շարւած փայտէ արկղներում դարսած հրացանները «Հսկողութեան ու պահեստի» շաբաթական մեծ գումարներ էին պահանջում, եւ չնայած դրան՝ «Հսկողութիւնը» յանքան անուշադիր էր, որ մերթ ընդ մերթ արկղներից մի քանիսը բացւում էին, անձեւից եւ ծովի խոնաւութիւնից հրացանները սկսել էին ժանդուել։ Կար միայն մի ելք՝ յոյն նաւալարների օգնութեամբ, կաշառելով եւ աւտորիքական ծովափնեայ ծառայողներին եւ Փիրէայի գործակատարներին՝ բերել առ ժամանակ պահել արկղները Փիրէայում, ու այնտեղից նորից տեղափոխել կամ Թիւրքիայի սահմանակից յոյն կղզիների վըրա եւ կամ, եթէ յաջողւի ու յարմար դատուի, Յունաստանից ուղարկել, գէթ արկղների մի մասը, Պարսկաստան մտադրութիւն կար պարսից սահմաններից տեղափոխել զէնքը Վասպուրական։ Հարցը կնճռու էր. պահանջում էր շատ ժամանակ, մեծ ծախսքեր, մաքսային ու մաքսանենդութեան ու այդ հարցին ծանօթ մարդիկ, ուրոնք միեւնոյն ժամանակ պէտք է լինէին հաւատարիմ ու յեղափոխական մղումներով առաջնորդւած։

Հետագայում, 1892 թ. գարնան՝ Հնչակի կենտրոնի տեղափոխուելը Աթէնք՝ մասսամբ առաջնորդւած էր այն մտքով, որ, լինի, զէնքի հարցը, լինի Հնչակի համարների կապոցների, լինի «Երկիր» գընացող յեղափոխականների յարմարութեան տեսակէտից՝ Աթէնքը, որպէս Թիւրքիային մօտ աշխարհագրական կէտ, ունէր բոլոր յարմարութիւնները։ Ի հարկէ, չէր մոռացւած եւ այն հանգամանքը, որ յոյն կառավարութիւնը եւ ժողովուրդը ամբողջովին համակրում էին հայ յեղափոխական կուսակցութեան։ Միջանկեալ յիշեմ այստեղ եւ այլ հանգամանք. Յունաստանի Կորնթոս ջրանցքի կառուցման աշխատանքների վրա եկել հաստատել էին թրքահայ բանտորներ, որոնց թիւը անցնում էր հազարից։ Կորնթոսի եւ Փիրէայի նաւահանգստում ծառայող հայ բանտորները 1891 թ. յուլիս 15-ին հրապարակային հանդիսաւոր ցոյցով (Հնչակի գրօշակը, «Մեր Հայրենիք»-ը, հայերէն եւ յունարէն ճառեր ուղղւած ընդդէմ թիւրք կառավարութեան) ամբացրին այն միտքը, որ արդարեւ Հնչակի կենտրոնը պէտք է Թիւրքիային աւելի մօտ մի աշխարհագրական վայր տեղափոխւի։*)

*) Յոյն քերքերը գրում էին (առևում եմ երկարաշունչ յօդւածների ամփոփ բովանդակութիւնը). «15 յուլիսին Հայ Յեղափոխական Կուսակցութիւնը կազմակերպել էր անցեալ տարւայ Պոլսում տեղի ունեցած հայ քաղաքական ցոյցի տարեգարձի յիշատակը 95 տարեկան մեր ծերունի հերոս Բոցարիսի հականաւորու-

Թալով թրիէսթի զէնքին՝ պէտք է առեմ հետեւեալը. երբ 1893 թ. գարնան Աթէնք էի եկած, տեղեկացայ, որ Յունաստան հասած էր միայն 700 հրացան, բայց այդ պահին դեռ եւ ոչ մէկը յաջողւած չէր ներմուծել թիւրքիայի սահմանները. մօտ 50 հրացան ծախւած էր յոյն նաւալվարներին եւ դրա փոխարէն ատրճանակներ էին զնւած. մի քանի կապոց ատրճանակներ յաջողւած էր ներմուծել Կիրասոն եւ Կիլիկիայի ինչ որ ծովափնեայ քաղաքները:

Հետազում ի՞նչ եղան այդ զէնքերը, չգիտեմ: Լսած էի միայն, որ Հնչակի կենտրոնը յանձնարարել էր Օհանջանեանին փոխադրել զէնքերը պարսից սահմաններից Հայաստան: Փոխադրութեան ժամանակ նա ձերբակալում է ու Վանում բանտարկւում: Բանտում, ըստ իր պատմածների (ոչ ինձ, քանի որ ես նրան միայն 1891 թ. տեսած եմ Ժընեւում), նրան բաւական չարչարել են եւ, ինքնասպանութեան փորձից յետոյ, բերել Պոլսի: Պոլսի հռչակաւոր ոստիկանակետ Նազըմ բէյը երկարօրէն հարցագննում է նրան ու քիչ ժամանակ յետոյ աղատ արձակում Պոլսում:

Անշուշտ, այն ժամանակների Պոլսի թիւրք ոստիկանապետը յաճախ գործածում էր իրար ժխտող մեթոսներ ձերբակալուած հայ յեղափոխականների վերաբերմամբ. եղած են դէպքեր, երբ Նազըմ բէյի գործածած միջոցները թւացել են «տարօրինակ» եւ «անողնայար». բայց թէ Օհանջանեան իր ազատութիւնը դրա՞նց էր պարտական, թէ այն պայմաննին, որ նա, ի վերջոյ, ուռւսահպատակ էր: Լսած էի նոյնպէս հետազում, որ «Արտաւազդ»-ին կարելի էր տեսնել Պոլսի մայթերի վրա եւ սրճարաններում լւա հազնւած, գլխին Փրանսական գլխարկ, Պապը - Ալիի ցոյցին մասնակից ու գործադրող: Պոլսից նրան յաջողւում է զնալ Լոնդոն Հնչակեան Ընդհ. Ժողովին. պառակտումներից յետոյ նա չմասնակցեց յեղափոխական գործին եւ զրադւեց անձնական դործերով: Ինչպէս միշտ, նա սիրում էր ար-

թեան տակ: Քոնֆէտէրասուն Օրիանթալը, որի մէջ մտնում են Կրէտէի, Մակեդոնիայի, Ալբանիայի, Փոքր Ասիայի յոյն լոմբացուրիւնների եւ հայերի ներկայացուցիչները, մեծ քափօր էին կազմած, տանում էին Ճանկիւլեանի, Մասուկ Նալբանդեանի եւ Յովհաննես Ղումբուեանի պատկերները (Կ. Պոլսի ցոյցի հերոսները). Երգում էին յունաց քայլերզը եւ «Մեր Հայրենիք»ը: Թափօրը եկաւ ծերութիւն բացարիսի բնակարանի առաջ. ծերութիւն հերոսը արտասահց մի կրակու նառ ընդէղմ թիւրք բռնակալութեան: Միւս օրը թիւրք դեսպանը բռղոքեց յոյն կառավարութեան առաջ: Յոյն կառավարութիւնը պատասխանել էր, որ երկրի սահմանադրական օրէնքները բոյլ են տալիս այդ տեսակ քափօրներ...:

կածը, եւ կենցաղասիրութիւնը նրա համար միշտ աւելի արժէք եւ հմայք է ունեցած, քան թէ գաղափարական կոիւն ու յեղափոխութեան իմաստը. էլ չեմ ասում աառապող ժողովրդի ճակատապիրը: Հետազայում ձեռքս էր ընկել Ա. Նազարբէկի մի յօդւածը, որտեղ նա իր մաղձն էր թափում Պոլսի մի շարք մտաւորականների, նախկին հնչակեանների վրա՝ յորջորջելով նրանց «Փարիզի պոռնկատունների արկածախնդիր հերոսներ»: Օհանջանեանը արե՞լ էր արդեօք մատնութիւններ— տւեալներ չունիմ. նա՞ էր արդեօք Տիկ. Անուշի սնանկացման պատճառը — չգիտեմ: Ինձ համար Օհանջանեանը միշտ եղել է մի տեսակ հանելուկ. աւելի շատ թեթեւամիտ էր, քան թէ չարամիտ. աւելի արկածախնդրասէր, քան թէ մատնիչ, Փանֆառն էր, քան թէ համեստ գործիչ. համարձակ էր, բայց փոքրողի, երբ չէր յաջողւում: Բազմաչարչար Հայ Յեղափոխութեան փրփուրներից էր նա:

V

ՆԱԶԱՐԵԿԵԱՆ ԱՄՈՒԾ

1891 թ. գարնան, մինչդեռ Հնչակի կենտրոնը իր ամբողջ ուշադրութիւնը դարձրած էր Պոլսի, կամ թիւքահայ գաւառների յեղափոխանակ կազմակերպչական գործի վրա, և սուսահայ քաղաքներից էլ ինդրում, մինչեւ իսկ պահանջում էին, որ մարդիկ ուղարկւեն տեղային կազմակերպչական եւ «այլ հարցերի որոշումների համար»: Մասնաւորապէս ինդրում էին, որ Հնչակի ներկայացուցիչը գայ այցելէ Պետերբուրգի, Մոսկվայի, Օդեսայի, Աստրախանի եւ Ռուսաստանի այլ գաղթահայ վայրերը:

Քիմիական փորձնական աշխատանքներս այդ օրերը ստիպում էին ինձ լաբորաթուառում մնալ առաւտօնեան ժամը 8-ից մինչեւ երեկոյեան ժամի 7-ը. անկարելի էր մի րոպէ իսկ բացակայել. երեկոյեան վերադառնում էի տուն յոդնած եւ բաւականին ջղայնացած, որովհետեւ փորձերս անյաջող էին եւ պէտք էր վերսկել: Յիշում եմ՝ մի երեկոյ, եթէ չասեմ մի գիշեր, գալիս է ինձ մօտ Ա. Նազարբէկը եւ ասում է, որ Հնչակի կենտրոնը այնքա՞ն ուղարկած գործիչների կարիք ունի, որ ահա երեք ամէս է չի կարողանում մի պրոպագանդիստ — կազմակերպիչ ուղարկել ուղարկել կովկասահայ քաղաքները: Հնչակի հին ընկերներից Շմաւոնը Արարկիրում է, իսկ Ռ. Խանազատը գործում է այս պահին Կովկասից դուրս եւ հաղիւ իր օձիքն է աղատած ուղարկանութեան ճանկերից: «Ես, աւե-

լազնում է Նազարյէկիը, Խնդրեցի Յովնանից (Դաւթեան), որ նա անցնի ոռւսահայ քաղաքները, բայց նա առարկեց, որ նախ, 2 - 3 ամսից նա, վերջնական քննութիւններից յետոյ, քնդմիշտ վերադառնում է Կովկաս ու Թաւրիկ եւ Երկրորդ՝ նա չատ վարժ չէ ոռւսերէնին, մինչդեռ Պետերբուրգի եւ Մոսկայի հայութեան հետ գործելիս, պէտք էր լաւ ծանօթ լինել ե'ւ ոռւսերէնին ե'ւ այդ հայերի կենցաղին, մի խօսքով՝ չի կարող գնալ. Զաքարեանը (Լեռն Բարսեղեան) բացարձակապէս յայտարարեց, որ ուզում է գործել միայն թրքահայ գաւառներում. դա նրա կեանքի նպատակն է եւ այդ մըսքով այնտեղ գործելու համար է նա պատրաստում իրեն: Այդպիսով՝ մնում ես դու... ուզում ենք քեզ խնդրել անմիջապէս ճանապարհ ընկնել Պետերբուրդ, Մոսկա եւ այլ քաղաքներ. պէտք է 10 - 15 հայաբնակ քաղաքներում կազմել մասնաճիւղեր. այդ ճանապարհորդութիւնը քեզնից կը պահանջէ 3 - 4 ամիս... մենք զիտենք, որ ոռւսահայ քաղաքներում դու ամէն տեղ լաւ ծանօթներ կամ ազգականներ ունես»:

Որքան էլ իմ երիտասարդական անձնասիրութիւնը շոյւած լինէր, բայց ես առարկեցի, որ ինձ բոլորովին անպատրաստ եմ զգում մի այդպիսի բարդ եւ պատասխանատու գործունէութեան համար: Բացի այդ՝ ես, օրինակ, չգիտեմ ի՞նչպէս վարւել այն դէպքում, որ նոյն քաղաքում, որտեղ ես պէտք է կազմակերպեմ մեր կուսակցութեան մասնաճիւղը; արդէն, դիցուք, գոյութիւն ունի Դաշնակցական Կուսակցութեան մասնաճիւղը եւ կամ, դիցուք, եթէ այնտեղի դիտակից ազգասէր հայերը հակառակ են մեր սոցիալիստական գաղափարներին, մանաւանդ մեր ընդգծւած հակառակ եւ թշնամական զգացմունքներին դէպի ցարական կառավարութիւնը. «դու դիտես, ասում եմ Նազարյէկին, որ այնտեղից ստացւած նամակներից երեսում է, որ ոռւսահայ բուրժուած մտաւորականութիւնը սոցիալիզմից մի քիչ վախենում է. նոյնպէս ինձ համար պարզ չէ. կարելի՞ է արդեօք համերաշխութեամբ գործել կազմակերպչական եւ նիւթական ժողովարարութեան հարցում ուրիշ յեղափոխական խմբակների հետ, պարզ չէ ինձ համար եւ այն հարցը, թէ ի՞նչ պէս վերաբերւել եւ ի՞նչ անել այն դէպքում, երբ տեղային երիտասարդութիւնը կամ ենայ գնալ թրքահայ գաւառները, այսինքն՝ անմիջապէս կրամենայ նւիրւել յեղափոխական ակտիւ գործունէութեան հայաստանի գաւառներում: Բացի այդ՝ ես չգիտեմ եւ այն՝ կարելի՞ է եւ պէտք է, որ ոռւսահայ վայրերում կազմւելիք մասնաճիւղը միմեանց մէջ կապեր հաստատեն, թէ՞ նրանք պէտք է մնան

անջատ եւ միակ թելով կապւեն մեր կենտրոնի հետ։ Այս հարցերը, քանից արծարծւած են արդէն կենտրոնի նիստերում, բայց եւ ոչ մէկի մասին պարզ եւ կտրուկ որոշում չէ կայացած։ չե՞ս կարծում, արդեօք, որ մինչեւ այս բոլոր մութ կէտերը չպարզւեն, ես չեմ կարող տեղից շարժւել . . . » :

Նազարբէկը համաձայնում է ինձ հետ, բայց խնդրում է, որ վաղը անպատճառ իրեն հանդիպէմ եւ Մարօի ներկայութեամբ նորից վերադառնանք այս հարցերին։ Եւ երբ միւս օրը նոյն հարցերը դրի Մարօի ներկայութեամբ ու ինդրեցի պարզ որոշումներ, որպէս զի յետոյ ինձ էլ չմեղադրեն, ինչպէս մեղադրեցին Ռ. Խանազատին, թէ «ինքնագլուխ որոշումներ է արած, առանց կենտրոնի վճիռները աչքի առաջ ունենալու»։ Ես հաւատացած էի, որ Ա. Նազարբէկը ինձ հետ կը համաձայնւի (ինչպէս համաձայնւած էր երէկ ինձ ժօմ), որ պէտք է այդ հարցերը նախօրօք որոշեն եւ, ուրեմն, մի 7 - 10 օրով յետաձգել իմ ճանապարհորդութիւնը դէպի Ռուսաստան . . . : Բայց Մարօն, վրդոված շեշտով ու առաստաղին նայելով, ասես, ինքն իրեն խօսելով՝ ասում էր. «Մարդիկ կարծում են, որ յեղափոխական գործունէութիւնը քիմիական լաբորաթուառի մեթոդիկ աշխատանք է։ Հարցերը պէտք է վճռել կացնի հարւածով եւ ոչ թէ քիմիական անալիզով . . . »։ Պարզ էր՝ ում կողմն էր քարը նետած։ Իսկ Ա. Նազարբէկ, փոխանակ իմ մտքերը պաշտպանելու լուցկի էր փնտում ծխախոտը վառելու համր, ու վայր նայելով՝ ասում էր. «Գիտե՞ս, սիրելիս, Մարօի եղբայրը, Պրոֆ. Վ. Վարդանեանը, գրում է Պետերուրդից, որ յաջորդ շարաթ մեկնելու է քաղաքից։ Հետեւապէս, գու պէտք է ճանապարհ ընկնես 5 - 6 օրից ամենաուշը, որպէսզի նրա հետ հանդիպում ունենաս, ստանաս նրա ժողոված վողը. նա քեզ կը կապէ Պետերուրդի հայութեան հետ եւ քո գործը կը հեշտացնէ . . . »։

Մի քանի վայրկեան ես լուռ էի, որովհետեւ զդացի որ դա առաջին սկզբունքային նեղքն էր, որ հետագայում կամաց - կամաց պիտի լայնանար ու խորանար եւ բաժանէր իմ մտայնութիւնը նազարբէկեան ամոլի մտայնութիւնից։ Պարզ էր ինձ համար եւ հետեւեալը. չնայած, որ Ա. Նազարբէկ թէ՛ կրթութեամբ, թէ՛ մտաւոր զարդացումով եւ թէ՛ ընդունակութիւններով շատ աւելի բարձր էր, քան թէ իր կինո՞ Մարօն, բայց զրկւած էր ամուր կամֆից, համակերպւում էր կնոջ պահանջած գործելակերպին։

Ընդմիջելով ինձ, այստեղ պէտք է մի պահ կանդ առնեմ Նազարբէկեանների վրա :

Յետաղարձ հայեացք ձգելով անցեալի վրա, պէտք է խոստովանիմ, որ ես երբեք չեմ սպատահած իմ կեանքում մի գոյզ, երբ կինը եւ ամուսինը սերտօրէն կապւած փոխաղարձ սիրով եւ միեւնոյն քաղաքական իդէալներով՝ այնպիսի հակունեայ խառնածքների եւ «կառակլթէոփ» ներկայացուցիչներ լինէին։ Այդ գոյզը՝ Մարտ եւ Աւետիս Նաղարբէկեանները, իրենց պատանեկան կրթութեամբ էլ, ինչպէս եւ իրենց ճաշակով (որոնց ազգեցութիւնը հետագայում յայտնւեց), տարբեր բեւեռների վրա էին գտնուում։ Քանի նրանք կրում էին միեւնոյն քաղաքական իդէալները, ընդունել էին միեւնոյն գործելակերպը եւ օրն ի բուն մղուում էին ու գործում միեւնոյն նըսպատակի համար՝ չէին տեսնում, չէին զգում, որ իրար սիրելով հանդերձ, բոլորովին տարբեր անձնաւորութիւններ էին իրար հանդէպ։

Ծնւած թաւրիզեցի ունեւոր ընտանիքում՝ Ա. Նաղարբէկը միջնակարգ ուսում ստացել էր Թիֆլիսի Ռէշալական պետական վարժարանում, բայց իր մանկութեան եւ պատանեկութեան կրթութիւնը ստացել էր իր մօրեղբօր՝ Ա. Մելիք - Աղարեանցի տանը, որը ամուսնացած էր հայազգի վիպաղդիր Ծերենցի Մէնիկ աղջկայ հետ։ Նաղարբէկին հայերէն սովորեցնողը եղել է Մէնիկը։ Երեխայ ու պատանի Նաղարբէկը իր ազգային կրթութիւնը ստացել էր Մէնիկից եւ Ծերենցից, որ տարիներ ապրած էր Թիֆլիսում իր աղջկայ տանը։ Գանգուր, սեւաչեայ Երեխան սիրւած էր ամենքից, ընդունակութիւններ էր ցոյց տալիս Երաժշտութեան, նկարչութեան եւ հայերէն ոտանաւորներ զրելու մէջ։ Նրա հայերէնի կատարելագործման համար հրաւիրում են այն ժամանակաւայ հայազգի Եղէկեանին, որից Նաղարբէկեանը սովորում է արդի եւ զրաբար հայերէնը։ Պատանեկան հասակում Նաղարբէկը Ծերենցի խնդրանոք հրատարելագործման համար հրաւիրում են այն ժամանակաւայ հայազգի Եղէկեանին, որից Նաղարբէկեանը սովորում է արդի եւ զրաբար հայերէնը։ Պատանեկան հասակում Նաղարբէկը Ծերենցի խնդրանոք հրատարելագործման համար հրաւիրում է ամենալավ Փարիզի, թժկութիւն սովորելու համար։ ճանապարհին հանդիպում է Վենետիկ, մնում է Երկու ամիս Ալիշանի մօտ։ Ծերենցը տւած էր նամակ իր դասընկեր Ալիշանին՝ խնդրելով նրան մի քիչ զրադւել ընդունակ պատահու հետ։

Ես դժւարանում եմ ասել՝ «դժբախտաբար» թէ «բարեբախտաբար», Նաղարբէկը ծանօթանում է Փարիզում, Համալսարանի սըրահներում, սեւաչեայ, եռանգուն թիֆլիսեցի շատ համեստ ընտանիքից ելած ու Թիֆլիսի գլխաղիայում կրթւած ուսուախոս Օր. Մարիամ Վարդանեանի հետ։ Օրիորդը 2 - 3 տարով մեծ էր Նաղարբէկից։ Համարձակ վառվուն ուսանող - ուսանողուհիների մէջ

ոռւս յեղափոխութիւնից անվերջ խօսող ու վիճող Օր . Վարդանեանը — ապագայ Մարօն — քիչ թէ շատ հայերէն եւ վրացերէն կոտրատում է , բայց հո՛գ չէ՝ իրար հասկանալ կարելի է եւ ոռւսերէն խօսելով : «Կարճ ի կարճոյ», վոխաղարձ համակրանքը փոխում է փոխաղարձ յարդանքի . յարդանքը՝ սիրոյ : Օր . Վարդանեանը մկըրտում է ուսանող նազարբէկին ոռւս յեղափոխական «Նարոդովոլէց» կուսակցութեան աւազանում . իսկ նազարբէկը ծանօթացնում է Օր . Վարդանեանին հայ պատմութեան , հայ գրականութեան , թրքահայ ժողովրդի քաղաքական վիճակին : Այդ ըրջանին , ուսանող նազարբէկը «Լեռենց» կեղծ անւան տակ աշխատակցում էր Թիֆլիսի «Մշակում»-ում եւ Պոլսի «Մասիս»-ում : Մտանում էր Սրծրունիից քաջալերական նամակներ , իսկ «Մասիս»-ի խմբադրութիւնից՝ դոլասանքներ :

Երբ ուսանող նազարբէկեանը հաղորդում է Թիֆլիս մօրը , որ իր սրտի ընտրածը Օր . Մ . Վարդանեանն է , մօրը աչքերը «մութն է կոխում» ու բացէ ի բաց մերժելով իր մայրական համաձայնութիւնը՝ իմաց է տալիս իր եղբօր՝ Ա . Մելիք - Ազարեանցի միջոցով . «Տեսնւած բա՞ն է , որ ազնւատոհմ ընտանիքից — ու այնքա՞ն փառաւոր ապագայ խոստացող երիտասարդը — ամուսնանայ ինչ որ մի աղքատ նիհիլիստ ուսանողութու հետ , տարիքով է՛լ աւելի մեծ , քան թէ ինքը . իսկ եթէ այդ քայլը անէ , Աւետիսը թող գիտենայ , որ այսուհետեւ չի ստանալու մօրից եւ ոչ մի անթիմ . . . » :

Սիրոյ հարցում արտաքին արգելքն ու խոչընդուները միայն ամրացնում են սէրը . գոնէ այդպէս է լինում իր առաջին շրջանում : Բայց Ա . Նազարբէկի եւ Մ . Վարդանեանի անձնական վոխաղարձ զգացմունքները ամրացած էին արդէն նոր եւ ուժեղ շաղախով . ուսանող նազարբէկը Մարօի մէջ ամրացրել էր հայ աղդասիրական զգացմունքները , իսկ Մարօն իր ապագայ ամուսնու սրտում նոր աշխարհ էր բացել՝ ընկերվարական գաղափարը իր յեղափոխական զործելակերպով : Այս նոր մտածելակերպին խիստ մեծ չափով օդնեց եւ այն մտերիմ ընկերական ծանօթութիւնը , որ ապագայ ամուսինները ունեցան Փարիզում ապրող հոչակաւոր ոռւս ընկերվարական - յեղափոխականի՝ Լավրովի հետ : Այդ իդ՛ալիստ ծերունու հմայքը մինչեւ վերջը կրեցին Աւետիս եւ Մարօ նազարբէկեանները , Երբ արդէն Աւետիսը թողել էր Լավրովի իդէալիստ մտածելակերպը եւ որդեգրել էր ընկերվարութեան «մարքսիստ» կոչւած վարդապետութիւնը :

Եւ սակայն , յեղափոխական գործունէութեան սահմաններից

դուրս՝ Ա. և Մ. Նազարբէկեանները տարբեր մարդիկ էին։ Մարդը սիրում էր ջութակ նւագել. կինը ե՛ւ չէր սիրում, ե՛ւ չէր հասկանում եւ առ հասարակ երաժշտութիւնը համարում էր «բուրժուական ժամանց»։ Ա. Նազարբէկը սիրում էր բանաստեղծութիւնը, գրում էր ոտանաւորներ, մտցրել էր բանաստեղծական պատկերների մէջ «վիլխումիայական շեշտը», «միտքը»։ Կինը գտնում էր, որ «բանաստեղծն ու վիպագիրը բուրժուական քաղաքակրթութեան փարազիթներ են»։ Եթէ տան մէջ պատի վրա կախւած պատկերը ծուռ էր, Մարօն չէր նկատում իսկ. իսկ ամուսինը չէր կարողանում հանդարտ նստել, մինչեւ որ չշտկէր։ Պատուհանի վարագոյրը թեքւած էր եւ ամէն ըոսէկ կարող էր ընկնել. ամուսինը խնդրել էր Մարօն կարգի բերել, բայց Մարօն փոխանակ թեքւածը ուղղելու, պոկում, պատառում էր մի հարւածով վարագոյրը, «անհրաժեշտ չէ պատուհանին ունենալ ինչ որ մանր - բուրժուական զարդեր» եւ նման մտքեր յայտնելով։ Երբ յեղափոխական գործելակերպի կամ կազմակերպչական խնդրի հետ կապւած հարցերի առթիւ մտքեր ու կարծիքներ էին յայտնելու (կենտրոնի նիստում), Մարօն պնդում էր միայն իր ասածների, իր արտայայտած մտքերի վրա։ Է՛լ, Աստւած մի արասցէ, Եթէ «Աւոն» ուրիշների կարծիքը պաշտպանէր. ձայնը բարձրացրած, ձեռքերի իւրայատուկ շարժումներով եւ, ի վերջոյ, լայն բացւած աչքերով, յաճախ պատրաստ արտասուք թափելու, Մարօն անհուն կշտամբանքներով փորձում էր իր ասածը ընդունել տալ, անշուշտ չէր համարձակում ուղղակի վիրաւորական խակդիքներ թափել հակակարծիք արտայատողի հասցէին, բայց խայթոցներ ու ակնարկներ՝ բազմիցս. օրինակ, մի օր Մուրատին ասում է. «Ընկեր Մուրատ, լաւ բան արած կը լինէք, եթէ լոէք. դուք չէք հասկանում»։ Եւ կամ, շատ յաճախ, իր ամուսնուն ձգում էր «փոխանակ համարձակօրէն ջախջախելու, դու քո ուսոնո մեղմ ու ոլորուն խօսքերով ապացոյցներ ես բերում, վախենալով մարդու սիրաը ցաւացնել. ա՛հ, երեւում է, որ դու պարսկահայ ես, անուշ խօսող, ու մեղ պէս կովկաստհայ չես...»։ Եթէ Ա. Նազարբէկի կամքը առանց այն էլ մեծ չէ եղած, Մարօն ներկայութեամբ բոլորովին ընկճւում ու թուլանում էր։ Քանիցս պատահած էր, երբ նա Մարօն բացակայութեան իր ընկերների հետ համաձայն է եղած. բայց բաւական էր, որ նոյն վէճը Մարօն ներկայութեան լինէր, նա կամ լուռմ էր եւ կամ, ի վերջոյ, Մարօն հետ էր համաձայնուում։ Սրա հետեւանքը լինում էր այն, որ ժամանակի ընթացքում ընկերները, չնայած որ մէծ յարդանք ունէին նրա վերաբերմամբ, իրեւ մտաւորապէս կա-

բող եւ ընդունակ խմբագրի, հիասթափւում էին նրանից, իրբեւ ուժեղ կամքով չօժտւած զեկավար դործիչից . . . :

Առաջին տարիները ոչ ոք մեզնից չէր նկատած, որ Նազարեէկ- եան ամուսինները հակոտնեայ խառնւածքներ էին, որովհետեւ մենք տեսնում էինք նրանց փոխադարձ սէրն ու միեւնոյն գործի համար լիոխադարձ անձնազոհութիւնը. տեսնում էինք նրանց մտահոգու- թիւնները եւ նրանց փոխադարձ ինքնապաշտպանութիւնը, երբ հա- կառակորդ հայ խմբակներից ու կուսակցութիւններից ստանում էի հարւածներ. մենք չէինք նկատում, որ հայկական յեղափոխութիւ- նը նախ եւ առաջ պահանջում էր զեկավարից գերբնական կամքի ոյժ, մինչեռ երկու գլխաւոր յեղափոխական զեկավար ոյժերից մէկը՝ Մարօն, թէեւ օժտւած էր կամքի ոյժով, բայց խուժանավար էր եւ հիսթէոփք իր էութեամբ, իսկ միւս ոյժը զուտ մտաւորական էր, բայց թոյլ եւ երերուն կամքով եւ ամբողջապէս հիփնոսացած իր կնոջ կամքով:

Կրկնում եմ, ամուսինների փոխադարձ սէրը խիստ մեծ էր. նը- րանք ոչ թագցնում էին այդ եւ ոչ էլ ամաչում. շատերը կարծում էին, որ այդ ամուսինների փոխադարձ զգացմունքները գտած են ի- րենց հոգեկան բարձունքները. թերեւս այդպէս էլ էր, երբ դեռ շա- րունակում էր «սուրբ գործը», որին նրանք հաւատում էին եւ որի դառնութեան բաժակը նրանք վճռած էին խմել մինչեւ վերջը: Բայց երբ 1896 - 97 թւականների կուսակցական ներքին պառակտումնե- րից յետոյ գործից հետացան, քօղարկւած վիճը նրանց մէջ բացւեց եւ կին ու մարդը բաժանւեցին իրարից, որպէս ոխերիմ թշնամիներ: Երբ կար հաւատը դէպի իրենց տարած գործը, կար եւ փոխադարձ սէրը. կործանւեց հաւատը, կտրւեցին եւ իրար կապւած թելերը. իսկ առիթը միւսյն օդնեց մէկի եւ միւսի տապալման . . . :

Բայց սա յետադարձ հայեացը է եւ շատ հեռու է իմ այն յուշե- րից, որոնց եւ վերադառնում եմ:

VI

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՌՈՒՍԱՀԱՅ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Արդպէս, ուրեմն, մի կողմ թողած կազմակերպչական սկզբուն- քային հարցերը, մեկնում եմ Ժընեւից եւ 1891 մայիսի վերջերը հասնում եմ նախ ոուսաց առաջին մայրաքաղաք Պետերբուրգը, ա- պա Մոսկան ու յետոյ իջնելով հարաւ՝ այցելում եմ յեղափոխա- կան - կաղմակերպչական նպատակով Նոր - Նախիջեւան, Թաղան-

ոսդ, Արմաւիր, Ստաւրոպոլ, Եկատերինոդար, Խզլար եւ Մող-
դո ք. վերջին հինգ քաղաքները հիւսիսային կովկասեան սահման-
ներումն էին :

Այն ժամանակները Պետերբուրգում եւ Մոսկվայում կենտրոնա-
ցած էր համալսարանական եւ բարձրագոյն վարժարանների հայ ու-
սանողութիւնը : Պետերբուրգում ապրում էին տասնի մօտ կառա-
վարչական բարձր հայ պաշտօնեաներ, իսկ Մոսկվայում՝ հայ խոշոր
վաճառականներ : Երկու քաղաքների հայութիւնը մօտ հինգ հազար
էր : Վերեւ յիշւած բոլոր քաղաքները վաղուց կտրւած էին մայր -
հայրենիքից եւ օտարացման ու ոռւսացման լայն եւ դիւրին ճանա-
պարհի վրա էին կանգնած : Ես ունեմ բազմաթիւ առարկայական
տւեալներ, որոնք ինձ թոյլ են տալիս գալ հետեւեալ եղրակացու-
թեան . Եթէ ութսունական թւականների կէսերից սկսած չծնւէին
նախ Հնչակեան, ապա Դաշնակցական Կուսակցութիւնները ու եթէ
հետագայում դրանք (մասնաւորապէս Դաշնակցութիւնը) քսան - ե-
րեսուն տարիներ չհրահրէին իրենց յեղափոխական դործելակերպով
հայ ժողովրդի ազատութեան եւ Հայաստանի անկախութեան խըն-
դիրը, ուռսահայ ազգաբնակչութիւնը տասը - քսան տարւայ ընթաց-
քում անհետ կորսւած կը լինէր ուսւ համայնակուլ ալիքների մէջ :
Մինչեւ իսկ Անդրկովկասում եւ Ռուսահայաստանի նահանգներում
գտնւած հայութիւնը կորուստի (ազգային տեսակէտից) լայն ճամ-
բուն վրա էր գտնուում : Ռուս հարուստ մշակոյթը, օրէցօր զարգա-
ցող Ռուսաստանի տնտեսական պայմանները, մայրաքաղաքների եւ
զաւառական քաղաքների «քաղաքակիրթ» կենցաղը, «աղատմիտ» սո-
վորութիւնները, ուռսական համալսարանների հայ ուսանողութեան
որդեգրած ոսւսի սպեկան եւ նիւթական հարուստ մշակոյթի պատ-
ւաստման անհրաժեշտութիւնը հայ ժողովրդի մէջ (կեանքի կուից
յետ չմնալու նպատակով), Անդրկովկասի հայրնակ կենտրոնների
հայ ազգաբնակչութեան ուռսախօս - վրացախօս (Թիֆլիսում) եւ
կամ հայ - թաթարախօս (Բագուի) հայութեան օրերը համբւած էին .
չէր կարող օգնել ո՛չ պահպանողական հայ մամուլը, ո՛չ էլ ուռսա-
սէր հայ աղատամիտ «Մշակ»-ը : Հիւսիսից սփռուղ յորդ ու թարմ
ալիքները սիփտի խառնէին իրենց վազքում հարաւային անշարժ եւ
ցամքուղ ջրերը ու կլանէին նրանց : Յետամնաց օտար երկրներում
հայ եկեղեցին, հայ մամուլը եւ հայ գպրոցը մեծ աղդակներ են ե-
ղած աղդապահպանման հարցում առ հասարակ . բայց ո՛չ միշտ եւ
ո՛չ ամէն տեղ : Հայ եկեղեցին չկարողացաւ փրկել կորստից վերջին
չորս զարերի ընթացքում հայկական խոշոր զանդւածները ցրւած եւ-

բազայի գանաղան վայրերում : Մասնաւորապէս Ռուսահայաստանում ոչ հայ մամուլը, ոչ էլ հայ դպրոցը պիտի կարողանային փրկել հայութիւնը ոռւսացումից, երէ մէջտեղը չընկնէր Հայաստանի ազատագրման եւ յեղափոխութեան գաղափարը ու հայ կուսակցութիւնների յեղափոխական եւ մարտնչող գործելակերպը : Ռուս կառավարութեան սիստեմատիկ տարած (մերթ մեղմ, մերթ կոչտ միջոցներով) ոռւսացման քաղաքականութիւնը, եւ որուն համապատասխան ոռւս տնտեսական կեանքի յարմարեցման ոյժերը այնքան մեծ էին եւ իրական, որ կրաւորական եւ քաղաքական անշարժութեան ենթարկւած հայութիւնը ոչինչ չէր կարող անել . միայն քաղաքական կոիւր, համահայկական հաւաքման գաղափարի ներգործական տրծարծումը կարող էր մեծ, թերեւս գերազոյն ազդակը դառնալ ոռւսահայութեան ազդային փրկութեան համար :

ԶԵմ երկարում այս մեծ հարցի վրա, չխճողելու համար իմ յուշերը, ու եթէ այդ մասին մտքեր յայտնեցի՝ միայն ցոյց տալու համար հետեւեալը : Ռուսաստանի եւ Կովկասի իմ բոլոր այցելած հայաբնակ քաղաքներում հայը թէեւ զգում էր իրեն ոռւս քաղաքացի եւ Ռուսաստանի ճակատագրի հետ կապւած, բայց տենչում էր բարոյապէս կապւել իր հարազատ հայութեան հետ այն օրից, երբ նրա մէջ արթնցաւ ազգային ներգործական յեղափոխութեան գաղափարը եւ նա հաւատաց Հայաստանի աղատազրութեան եւ անկախութեան իրագործման : Հայկական պատմութեան հոգեբանական մեծ ջրաբաշխն է իննսունական եւ հետագայ թւականների շրջանը, որը ոռւսահայութեան թոյլ, թմրած, կորովազուրկ մարմնին՝ Ազգային Անկախութեան աւելի պատաստելով՝ ամբացը դիմադրութեան ոյժը եւ փրկեց ոռւսացման տանող կորստից :

Գետերբուրգում յանձնաբարութիւն ունէի Պրոֆ. Վարդան Վարդանեանին (Մարօի եղբայրը) : Սա չթագցրեց ինձնից, որ թէեւ ինքը եւ իր ընտանիքը, ինչպէս եւ մայրաքաղաքի հայութեան մեծամասնութիւնը ոռւսախօս են, բայց ամենքն էլ, ահա վեց - եօթ ամիսներ է, որ սովորում են հայերէն, աշխատում են հայերէն խօսել եւ, ի հարկէ, կասկածից դուրս է, որ յափշտակւած են Հայ Յեղափոխութեան խոր գաղափարով եւ պատրաստ են օգնել մեծ գործին նիւթականով . ինքը լսած էր, որ հայ երիտասարդութեան մէջ կան շատերը, որոնք պատրաստ են իրենց անձը նուիրել հայ յեղափոխական գործին . ամենքն էլ մեծ հետաքրքրութիւն են ցոյց տալիս Յեղափոխութեան ընթացքին եւ կը կամենային ի մօտոյ ծանօթանալ, թէ ի՞նչ վիճակի մէջ է «գործը» Պոլսում եւ թրքահայ գաւառներում : Պէտք

է ասեմ, որ այդ մտքերն ու խօսքերը յաճախրառ առ բառ լսեցի հայրնակ եւ այլ վայրերում։ Իմ խնդրանօք, Վարդանեանը իր տունը հրաւիրեց Պետերբուրգի բոլոր խաւերից «ազգասէր հայերին», մօտ 60 հոդի։ Եկած էին մօտ 50 հոդի. «Հիւանդութեան պատճառով» չէր եկած հայութեան ծանօթ կառավարչական մեծ պաշտօնեայ Կ. Եղեանը։ Խնդրել եւ ասել էի Վարդանեանին, որ տեղի քահանայի ու վարդապետի ներկայութիւնը այնքան էլ անհրաժեշտ չէ ժողովին։ Վարդանեանը իր կողմից խնդրել էր ինձ, որ խօսելով Հայ Յեղափոխութեան գործի ու բանելիք գործելակերպի եւ պահանջների մասին՝ խուսափեմ ընկերվարական դադարիարի վերաբերեալ խնդիրներից, եւ առանձնապէս լում ոռւս կառավարութեան յետադիմական լնդհանուր քաղաքականութեան մասին, «թէեւ, ի հարկէ, աւելացնում էր այդ լոկալիտ, բայց մի քիչ միամիտ պրոֆեսորը, մենք ամենքս էլ համակրում ենք ընկերային գաղափարներին եւ ամենքս էլ տուժում ենք ոռւս կառավարութեան ոէաքսիոն քաղաքականութիւնից»։

Առաջին նիստից պարզւեց, որ ամենքն էլ վառւած են ազգասիրական մղումներով, պատրաստ են օգնել եւ անհրաժեշտ են գտնում «պէտքին պէս կաղմակերպւել», որ «կուկունեանի դժբախտ դէպքը չկրկնւի»։

Եթէ ծնւել էր Հայ Յեղափոխական շրջանը, նրա հետ ծնւում էր եւ անգիր պատմութիւնը. այսինքն՝ իրերի եւ մարդկանց առասպելական ձեւերով ներկայացնելը։ Ներկայ եղողներից շատերը համոզւած էին (իբր թէ այդպէս էին լսած), «որ Թրքահայստանի գաւառները Հայ Յեղափոխական ցանցերով են լցւած», թէ «Կ. Պոլսում քառասուն հազար Յեղափոխութեան նւիրւած Հայ մշակներ եւ արհեստագորներ կան, որոնց սակայն պակասում է զէնքը»։ Շատերը հարցնում էին «բարեկամաբար, ոչ - պաշտօնապէս, հազորդել», թէ մօտաւորապէս ե՞րբ կարող է սկսել Հայաստանի գաւառներում ընդհանուր ապստամբութիւնը...»։ Ներկայ գտնւողներից մի քանի ները խորհուրդ էին տալիս ինձ յայտնել Յեղ. Կեդրոնին, որ Անդլիայում այժմ պատրաստում են նոր ձեւի հրացաններ ու ատրճանակներ, ուստի չգործածել «բերդանքա» կոչւած հրացանները...։ Իմ վիճակը բաւական փափուկ էր. պէտք էր եւ պատասխանել, եւ չխարել, եւ զուտ դադանիք համարւած հարցերից խուսափել ու առասպելները չհերքել, մի տեղ չլսող ձեւանալ, միւս տեղը այնպէս պատասխանել, որ հարցը կտուրը ընկնի...։ Առաջին նիստը վերջացւ մեծ ողեւորութեան մէջ. ընտրւեց Պետերբուրգի մասնածիւղը

«Բեւեռ» յորջութումով։ Արդէն ցրւում էին ժողովականները, երբ ուսանողներից մէկը հարցրեց ինձ. «Բայց ինչո՞ւ ձեր կուսակցութիւնը իրեն սոցիալիստ է անւանում»։ Որքան էլ ինձ համար «սոցիալիստական իդէալը» մէր կուսակցութեան փայլը լինէր, բայց եւ այնպէս այն շրջանի իրական կեանքի եւ փորձնական գործունէութեան պայմաններին պատահէլով՝ զգացի, որ «սոցիալիզմը» կարող է պայմուցիկ ոռումքի դեր խաղալ Հայ Յեղափոխութեամբ տողորշած ու նոր կազմւած մարմնի համար, որի մէջ մտնում էր ե՛ւ հայ վաճառականը, ե՛ւ ուսանողը, ե՛ւ բժշկական ակադեմիայի պրոֆեսոր Վարդաննեանը, ե՛ւ Փինանսների նախարարութեան հայ ծառայողը, ե՛ւ հայ միջին կամ մանր խանութպանը։ Զգացի, ասում եմ, առաջին անգամ, որ մէր որդեգրած «սոցիալիզմը» ե՛ւ մէր հպարտութիւնն է, ե՛ւ մէր թոյլ կողմը, եթէ չասեմ «Աքիլէսի կրունկը...»։

Ուսանողի դրած հարցին յանպատրաստից պատասխաննեցի, թէ «Սոցիալիզմի եւ Հայ Յեղափոխութեան հարցը շատ բարդ է եւ հետաքրքրական, բայց զուտ ակադեմական բնաւորութիւն է կրում. եթէ կան ներկայ եղողների մէջ խսկապէս հետաքրքրութներ այդ հարցով, կարելի է մի ուրիշ, մասնաւոր նիստ ունենալ հետաքրքրութների համար եւ պարզաբանութիւնները կանեմ...»։ Բայց ներկայ եղողները ընդմիջեցին ինձ ասելով. «Ժողովներ գումարելը առանց այն էլ դժւար է. խուսափենք, պարոնայք, ոստիկանութեան աչքը ընկնելուց. հետաքրքրութը կարող է Ռ. Բ.-ին այցելել»։ Միւս օր ինձ այցելեցին երկու ուսանողներ, որոնք երկու ժամ ինձ հետ «մըտքերի փոխանակութիւն» անելուց յետոյ, ամբողջովին հակւեցին ընկերվարական գաղափարին. դրանցից մէկը (Զ.), չնայած որ հարիւր տոկոսով ընկերվարական էր, հետազայում գնդակահարւեց բոլշեւիկ սատրապների ձեռքով իրբեւ «Հակայեղափոխական...»։

Պ. Վարդաննեանը երկու օրւան մէջ ժողոված էր հազար հարիւր բուրլի. խնդրեցի, որ ինքը տեղափոխէ ֆրնեւ. նա յայտնեց, որ կազմւած մասնաճիւղը վնաել է ամէն ամիս նոյնքան ժողվել Պետերբուրգի հայերի մէջ. ուրախ էի, որ այսոյ յաջող հետեւանքներ ունեցաւ. Ես այնքան անփորձ էի իրական կեանքին, որ այդ վեխները փաստի տեղ էի ընդունում. հետադայում, Պետերբուրգի մասնաճիւրը կրճատելով, կրճատելով իր «վճռած գումարը»՝ վեց ամսից յետոյ բոլորովին անփոյթ գտնւեց ե՛ւ ժողովել, ե՛ւ ուղարկել։ Ինչպէս զրում էր մի տարի յետոյ Վարդաննեանը, «այստեղի հայերը զարմանում են եւ վշտացած են, որ գործ չի երեւում...»։ Եւ այդպէս միշտ նոյն հոգեբանութիւնը, զուտ հայկական, որին քանիցս

հետեւեալ տարիներում ներկայ պիտի լինէի՝ «սիրով կօդնենք գործին, բայց գործ չենք տեսնում»։ Գործը — աղմուկ էր, «ցոյց» էր, «ձգւած ոռոմբեր»։ կամ «մատնիչի սպանութիւն», իսկ դլխաւորը, որ օտար լրագիրները խօսէին Հայ Յեղափոխութեան մասին։ Հայ թերթերի թղթակցութիւնները այնքան էլ համոզեցուցիչ չէին։ պէտք է որ օտարները զբաղւէին, մտահոգւէին, վրդովէին, կամ քաջալերէին հայերին։ Հայը ա՛յնքան երկար ժամանակ լսած էր ուրիշներից, որ հայը վախկոտ է, ստրուկ է ու հրացանի ձայնից սարսափում է, որ իր վրա նայում էր միայն օտարը աչքերով։ Եթէ օտարը ասաց, որ հայը զէնքով պաշտպանուում է, նշանակումէ քաջ է, ուրեմն, նա յեղափոխութեան ճամրան է րոնած, ուրեմն, Յեղ. կուսակցութիւնը իսկապէս գործով է զբաղւած, ուրեմն, մեղք է յեղափոխական կուսակցութեան չօգնելը։ Այդ հիւանդ մտայնութիւնը իր բացասական ազգեցութիւնը ունեցաւ սկզբից ի վեր թէ՛ Հնչակեան եւ թէ Դաշնակցական կուսակցութեան վրա, յաճախ ստիպելով նրանց դիմել ոչ - օրինապատշաճ գործելակերպի, տւեալ աննպաստ պայմաններում։

Պետերբուրգից անցայ Մոսկա : Այստեղ աւելի հեշտ էր իրագործել ծրագիրս։ այսինքն՝ կազմել մասնաճիւղ, դիմել ժողովարութեան եւ մտերմանալ երիտասարդութեան հետ, որից, թերեւս, դէմ մի քանիսները, նւիրւէին անմիջական յեղափոխական գործունէութեան։ Այդ ժամանակները, Մոսկայի ուսանող էր մեծ եղբայրս Մինասը, որը աշխատակցում էր Թիֆլիսի պահպանողական «Նոր Դար» լրագրին, բայց ինչպէս եւ հայ ուսանողութեան մեծամասնութիւնը (Նոր - գարական թէ Մշակական) ընդունում էր Հայկական հարցի լուծման յեղափոխական միջոցների դիմելու անհրաժեշտութիւնը։ Մինասը, ընդունակ եւ եռանգուն, ամէն տեղ «մըտնող - ելլող» էր։ նախօրօք իր երկու ընկերների (եւ իմ լաւ ծանօթբարեկամների)՝ ուսու ուսանող Վեսելովսկու եւ երիտասարդ բանատեղծ Աղեքսանդր Ծատուրեանի հետ հող էր պատրաստել Մոսկայի հայ վաճառականների շրջանում։ սրանց մեծ մասը մեր Նոր - Նախիջեւանից եկած մանր հայեր էին, որոնք տարիների ընթացքում գարձել էին խոշոր վաճառականներ։ խօսել էր եւ հարուստ ժամանական Դրամատան սեփականատերերի հետ, որոնցից մէկը ամուսիցացած էր Նոր - Նախիջեւանցի մեր հարեւան Օր։ Խըլըթչեանի հետ եւ իմ մասին արդէն լսած էր։ խօսած էր նոյնպէս իր նախկին ուսուցիչ բանաստեղծ Սմբատ Շահաղիզեանի հետ, որը ասել էր եղբայր՝ «Հէնց որ եղբայրդ Մոսկա գայ, ուղղակի եկէք ինձ մօտ»։

Պէտք է խոստովանեմ, ի մեծ ամօթ իմ երիտասարդական մեծամտութեան, որ ես Սմ. Շահաղիզեանի մասին կազմած էի շատ բայցասական եւ կանխակալ կարծիք. գիտէի որ վաթսունական թւականներում բանաստեղծի մեծ հռչակ էր ստացել ու լսած էի, որ որ լքած էր հայ գրականութիւնը եւ Լազարեան ձեմարանի հայերէն լեզւի ուսուցիչ էր դարձել վերջին երեսուն տարիները ու բոլորովին չէր հետաքրքրում (այդպէս էի կարծում) հայկական հարցով։ Առանց մեծ ցանկութեան նրան այցելեցի, բայց երբ երկու ժամ յիտոյ նրան թողնում էի, ես յափշտակւած էի նրա առողջ հայրենասիրական զգացմունքներից։ Նա պատմեց ինձ, որ հայ յեղափոխական առաջին ներդորածական քայլերը կենդանացրել էին նրա թմրած հողին, ներշնչում էին հաւատ դէպի հայ ժողովուրդը, ու իր «գառնացած եւ հիսոթափւած կեանքի արեւամուտին վերջնապէս տեսնում է ազգային ազատութեան ու անկախութեան արեւը»։ Երբ ինձնից լսեց, թէ ի՞նչ եմ մտադիր անելու Մոսկւայում՝ խնդրեց, որ իրեն թողնեմ իր գիտցածի պէս մի մեծ նիստ գումարել Մոսկւայի հայերի բոլոր խաւերից։ «մեռած հոգւով մարդկանց չեմ կոչելու. նրանք ձեզ պէտք չեն. կը գայ կենդանի սերունդը, կը գան եւ այն խաւերից, որոնք հրացանը անոյժ են վերցնելու, բայց ձեզ ձեզ կօգնեն հրացան ձեռք բերելու» :

Ս. Շահաղիզեանի աշխարհաբառը յստակ եւ մաքուր էր, բայց մերթ ընդ մերթ դեռ լսում էին ոռւսահայ վերածնութեան շրջանում դործածած բառերը՝ «մտանում եմ» (մտնում եմ), «ամենեւին այդպէս է» (բոլորովին այդպէս է), եւ կամ «նախախնամութիւն», «մենք որ աղդի լուսաւորիչներ ենք եղած՝ կուելով խաւարամիտների դէմ», եւայն. իսկ երբ նրա սենեակում նկատեցի Սիք. Նալբանդեանցի եւ Ստ. Նազարեանցի լուսանկարները, մի պահ սլացայ դէպի Մոսկւայի վաթսունական թւականները, հայ հասարակական դադարական բախումները . . . :

Ս. Շահաղիզեանը նոյն երեկոյեան այցելել էր Յ. Ժամհարեանին եւ խնդրել, որ վերջինս իր հոյակապ բնակարանում հրաւիրէ մօտ հարիւր մարդ. Ժամհարեանը ե՛ւ զարմացած էր ե՛ւ ուրախ, որ Շահաղիզեանին վերադարձել էր եռանդը, աչքերի փայլը, ճայնի ուժեղ շեշտը եւ հաւատը դէպի հայութիւնը։ Չեմ երկարում տեղի ունեցած ժողովի եւ ժամհարեանի մեծ սրահը լցւած հայ հասարակութեան ոգեւորութեան մասին։ Իմ եւ Աղ. Մատուրեանի առաջարկութեամբ ծերունի բանաստեղծը նախագահ է ընտրում ու խօսում է «երիտասարդ սերնդի դարբնած երիտասարդ Հայաստանի անմահ

գաղափարի մասին» : Խօսում է հայութեան պարտականութիւնների մասին՝ «ի սպաս զնելով՝ ոմանք իրենց աաղանդը ու գիտակցութիւնը, ոմանք իրենց փողը եւ ոմանք էլ իրենց սուրբ արիւնը» : Երկար տեւող ժողովը փակելուց առաջ նա նորից խօսք է առնում եւ իր ճառը վերջացնում է իր նոր գրած (քսանեւհինդ տարի բանաստեղծական լուսութիւից յետոյ) «Մեռաւ իմ Մուսան» բանաստեղծութիւնը . ձեռագիր ոտանաւորով թուղթը ինձ է տալիս, «իր» չահիլ բարեկամին» : *)

Մոսկայում մնացի տաս օր. բոլոր տաս երեկոները անցկացնում էի Ս. Շահազդիկեանի փոքրիկ եւ ցած առաստաղով բնակարանում : Նա չափաղանց ոգեւորւած էր «Հուտափոյթ կարեւորութիւններով», գերազանցօրէն մեծացնելով Հնչակեան կուսակցութեան իրական ոյժը եւ թրքահայութեան «պատրաստ» վիճակը : Ի զո՞ւր ամէն երեկոյ նրա չափաղանցրած կարծիքները մեղմ կերպով փոքրացնում ու չափաւորում էի . երբ հաւատը մէջտեղն է ընկած, ուրիշի համոզեցուցիչ խօսքերը անոյթ են : Ասեմ այստեղ, որ այդ երեկոները նա երկարօրէն պատմում էր ինձ իր մանկական ու երիտասարդական տարիների ու վախսունական թւականների հայ հանրային կեանքի, այլ եւ իր անձնական ապրումների, մասին : Ես այնքան յափշտակւած էի նրա պատմութիւններով, որ շատ տարիներ, ամէն անգամ երբ անցնում էի Մոսկայից, հանդիսում էի նրան ու ամէն անգամ ինդրում, որ պատմէ անցեալից . սկզբում մերժում էր («կարեւոր չեն, «պիտոյ է մոռացւեն»), բայց յետոյ երկարօրէն ինձ նայելով՝ ինչ որ ինքնամուացման մէջ, պատմում էր անցեալից՝ իր եւ ուրիշների կեանքից : **)

*) Այդ ձեռագիրը խնդրեց ինձնից իմ բարեկամ հայասէր իւոիյ Վեսելովսկին, ու քուզը մնաց նրա մօտ : Ամբողջ ոտանաւորից յիշողութեանս մէջ մնացել են միայն հետեւեալ երկու տողեր :

« . . . Հանում եմ զրահ, եւ զէն եւ զարգեր,
Յանձնում եմ զորանց մանուկ սերնդին . . .

Ո. Բ.

**) Սմբատ Շահազդիկանի կեանքը, վարսումական քւականների ազգային մքննորսի եւ ոռուական կառավարութեան բաղադրականութեան մասին գրած է տաղերիս գրադը «Լեւոնի վիշտը եւ Շահազդիկանի անձնական տռամը» գրւածքում. տես «Հայրենիք» ամսագրի 1938 թ., 10, 11, 12 եւ հետեւեալ համարները :

Զուտ կազմակերպչական գործը եւ վողի ժողովարարութիւնը յաջող ընթացք էր ստացել: Խնդրեցի ընտրւած գանձապահին, որ բոլոր գումարները, թէ արդէն ժողոված, թէ ժողովելիք, ինքը անձամբ փոխադրէ Ժընեւ տւեալ պայմանական հասցէին եւ անւան: Մոսկայի «տող» խաւերը, յայտնի չէ ինչու, իրենց գոհունակութիւնն էին յայտնել Ս. Շահազդիկանին, որ «եկող ներկայացուցիչը ինքը չի ընդունում փողերը եւ ձեռք չէ տալիս, մինչեւ իսկ չի հետապքը բուռմամ ո'րքան է ժողոված»: Ես, ի հարկէ, շատ էի հետաքը քրքրում, թէ ո'րքան է ժողոված, բայց ո'չ այն ժամանակ, ո'չ էլ հետապքայում որ եւ է աղգային գործի համար իմ նախաձեռնութեամբ ժողոված փողերին «ձեռք չէի տած»: Երեւի, ինչ որ բնադր զգուշացնում էր ինձ առ հասարակ մինչեւ իսկ հեռւից քաւելու «աղգային» փողերին: Հայերի մէջ ամրացած էին մի քանի «ցեղային» սովորութիւններ: Նախ՝ առաւտուն առաջին զարթնողը «աղգի» անունից էր խօսում: յետոյ՝ առաջին պատահողը «աղգի» անունից հաշիւ էր պահանջում: Գալով հայ հարուստին՝ նրա հոգեբանութիւնը արտայայտում էր այսպէս՝ «դգալով կը տամ, չաթալով աչք կը հանեմ»:

Երբ երեք ամիս յետոյ Ժընեւ էի վերադառնում, նորից անցայ Մոսկայից եւ երեք օր մնացի: Այդտեղ առաջին անդամ պատահեցի երկու դաշնակցականների: Մէկը ուղարկւած էր զէնքի համար փող ժողովելու նպատակով. միւսը՝ պրոպագանդի համար:

Այդպէս՝ Մոսկա էր ուղարկւած Թիֆլիսից՝ հայ սպայ (սուսաց զօրքի մէջ) Մ. Սամարցեանը. եկել էր Դաշնակցական կուսակցութեան կողմից ժողովարարութեան ծրագրով. փողը, ինչպէս առում էր, զէնքի համար էր (Թոււլա քաղաքում զնւելիք): Սամարցեանին ծանօթ էի. լաւ, բարի սրտով երիտասարդ էր. հայրը՝ Նոր Նախիջեւանցի էր. ինքը մի քանի տարի եջմիածնի Գէորգեան ձեմարանն էր սովորել եւ յետոյ ուռական զինուրական ծառայութիւն էր ընտրել: Տեսնել էր ժամհարեանի հետ ու մի քիչ զժոհութիւն յայտնել, որ ինքը պատահմամբ ուշանալու պատճառով — «Հնչակեանների պատճառով ձեռնունայն պիտի վերադառնայ. մինչեւ զէնքը անհարաժեշտ է, մարդիկ արդէն պատրաստ են Թուրքիա մտնելու, եւայլն»: Ժամհարեանն ինձ ասում է. «Եղբա՛յր, օֆիցիէր մարդ է ու մոնղերով (զինւ. համազգեստ), ի՞նչպէս կարելի է նրան էլ չտալ, մանաւանդ որ զէնք պիտի զնէ Թուլայում»:

— Ի հարկէ պիտի տաք նրան էլ, — պատասխանեցի ժամհարեանին:

«Բահ, թէ որ էպակս ա, խնդրում եմ եկէք վաղը ինձ մօտ ճաշի. նրան էլ կը կոչեմ» :

Սամարցեանին վաղոց է չէի տեսած. մօրուս էր թողել, սպայի համազգեստով էր եւ Երեւանի լաւ հայերէնով էր արտայարտում: Երբ Ժամհարեանը տեսաւ, որ պատահելով Սամարցեանի հետ՝ մենք ողջադուլւեցինք, այնքա՞ն ուրախացաւ, որ ճաշի չնըստած «մի մի արաղ» առաջարկեց, որ պիտի «վոթէինք» (խմէինք): Ճաշից յետոյ, երբ «գործնական խօսակցութեամբ պիտի զբաղւէինք», օգտւեցի առիթից եւ մի կողմ տանելով Սամարցեանին, հարցրի. «Դու ի՞նչ դումար ես երազում ժողովել Մոսկվայում. հա՛, չափող գիտցի՞ր, որքան դուքս գայ...» :

— «Ի՞նչ գումար... ամենաքիչը մի - երկու հազար ըուրիկ առայժմ...» :

— «Լա՛ւ. ես քեզ կօդնեմ. բայց պայման ունեմ. մեր այստեղի կազմած մասնաճիւղի եւ Հնչակեան կուսակցութեան մասին եթէ վաս խօսք ասես, ամէն միջոց ի գործ կը դնեմ որ կոպէկ իսկ չստանաս» :

— «Ինչ է՝ խենթ եմ..., ուրախացած ասում է Սամարցեանը, երկու կուսակցութիւններն էլ յեղափոխական են. իմ մէջ յեղափոխական կայծը առաջինը զարթեցրեց ձեր «Հնչակ» թերթը» :

Տեսնեցի Ժամհարեանի հետ, ու մի քիչ սակարկելուց յետոյ՝ նա համաձայնեց ժողովել «իր մարդկանցից» մի 1500 ըուրիկ եւ յանձնել Սամարցեանին: Ժամհարեանը պահանջում էր, որ «այդ օֆիցիը, առանց երկար բարակ Մոսկւա մնալու, գնայ թուլա ու ինչ որ պէտք է գնէ»: Այդպէս էլ եղաւ: Ժամհարեանը ուրախ էր, որ մարդիկ սխալում են, երբ անմիջաբար կրկնում են՝ «Հայք ո՛չ միաբան»: Ժամհարեանի լաւատեսութիւնը իմ վրա էլ աղլեց. ես էլ տեսայ, որ սուս է «Հայք ո՛չ միաբան» տասցւածքը. աւա՛ղ, պատրանք էր այն հաւատը, որ «Երկու Յեղ. կուսակցութիւնները» կարող են ընդհանուր լեզու ունենալ եւ բարձրանալ իրենց նեղ կուսակցական մտայնութիւնից:

Հէնց միւս օրը Ա. Ծատուրեանը վրդոված եկել էր ինձ մօտ յարոնելու, որ իբաւաբանական բաժնի հայ ուսանող Ա. Խ. վաղւայ համար ժողովի է հրաւիրել հայ ուսանողներ եւ վաճառականներ, որտեղ յատկապէս պիտի բացատրէ, որ «Հնչակի քարոզած սոցիալիստական գաղափարները վնասակար են Հայկական Խնդրին»: Ծատուրեանը ինդրում էր ինձ ներկայ գտնուել: Ես համաձայնեցի,

բայց այն պայմանով, որ ինձ էլ խօսք տան, եթե պէտքը զգամ բացատրութիւններ տալու:

Միւս օրը, սրահը մտնելիս, որտեղ արդէն քսան - քսանեւհինդ մարդ էր հաւաքւած, Ա. Ծառուրեանը ինձ ծանօթացնում է Ս. Խ.-ի հետ, որը, որքան յիշում եմ, բարձրահասակ էր, կրում էր փոքրիկ մօրուք, գլխին մազերի հարուստ խուրձ եւ, կարծեմ, մի քիչ կազում էր մի ոտքին:

Ս. Խ. խօսում էր հարթ, համակրելի եւ անկեղծ շեշտով Հայ Յեղափոխութեան գործունէութեան մասին: Ներկաները եւ ես առաջինը՝ ծափահարում էինք նրան, թէեւ ինքը հոեսորը մեծ զարմանքով մի պահ ինձ նայեց. երեւի այնպէս էր կարծում, որ եթէ ինքը «Երկու անդամ երկու չորս է» ասէր, ես անպատճառ «ոչ» պիտի ասէի:

Յետոյ անցնելով Հնչակեան կուսակցութեան, այն միտքն է յայտնում, որ թէեւ «Հ»-ը առաջինն է յեղափոխական մտքին դործի ձեւ տւել եւ «ակտիվ» միջոցների դիմել, բայց «որովհետեւ նա սոցիալիստական կազմակերպութիւն է ուղղում իրականացնել Հայաստանում», մենք գտնում ենք այդ միտքը վնասակար Հայ Յեղափոխական գործին. հիմնւած է մի առանձին կուսակցութիւն, «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն» անւան տակ եւ յատկապէս Հայ Յեղափոխութեան նպատակով. ներկայ պայմաններում սոցիալիզմի իրականացումը յետամնաց Հայաստանում, երբ Եւրոպայում իսկ հիմնւած չէ, կատարեալ խենթութիւն է...»: Ունկնդիրները ծափահարում են ու ինձ են նայում: Խնդրում եմ խօսք:

« Համաձայն եմ, ասում եմ, ոդ. Խ.-ի հետ, որ ներկայ պայմաններում սոցիալիզմի իրազործումը Հայաստանում խենթութիւն է. բայց կայ աւելի եւս մեծ խենթութիւն՝ կարդացածը չհասկնալ...»:

— Ինչպէս, ընդմիջում է Ս. Խ.:

« Ահա թէ ինչպէս. Հնչակը սոցիալիստական վարդապետութիւնը ընդունում է իրեւ մարդկային ամենաարդար ու վսեմ իդէալ. լսո՞ւմ էք՝ իդէալ. բայց մենք երբեք, ո՞չ մի անդամ, Հնչակի ո՞չ մի համարում միամտութիւն չինք ունեցած գրելու կամ ասելու, որ այսօր, ներկայ պայմաններում, մեր նպատակն է Հայաստանում իրազործել այն համակարգը, որ գեռ գոյութիւն չունի Եւրոպական եւ ոչ մի երկրում. անշուշտ, թրքահայութեան ազատութիւնը կարող է աեղի ունենալ եւ առանց սոցիալիստական գաղափարների... բայց միթէ՝ մարդկութեան հեռաւոր ապադան սոցիալիզմը չէ. Ի՞նչ-

ողէս կարելի է բողոքել կամ ծաղրել, որ հայ աղքամէր յեղափոխականը, իրբեւ հեռաւոր իդէալ, չկրէ իր արտի մէջ համամարդկային վսեմ գաղափարները. կրկնում եմ, խենթութիւն պիտի լինի կարծել, որ այսօր կարելի է սոցիալիզմ կառուցանել Հայաստանում:

Նոյն ներկաները, որ հինգ բոպէ առաջ Ս. Խ. Ա. էին ծափահարում, ինձ էլ օժտում են իրենց բուռն ծափերով: Մի քանիները խօսք են ուզում, միւսները բացադանչում են՝ «բաւական է, հասկացանք. Ռ. Բ.-ը պարզեց»: Նոր Նախիջեւանցի մի վաճառական, նոտած տեղից բարձր ձայնով ասում է՝ «ի՞նչ պօշ - մօշ բաներով մեր ժամանակը կառնելի...» :

Ժամը ուշ էր, ժողովը վահկուում է. դուրս ենք գալիս. Ս. Կ. Ժ. մօտենում է ինձ եւ գրպանից հանելով «Դրօշակ» թերթը, ասում է. «Դուք չէ՞ք տեսել այս թերթը. սա մեր կուսակցութեան առաջին համարն է. Եթէ, ինչպէս դուք պնդում էք, «Հ.»-ը այսօրւայ պայմաններում չի քարոզում սոցիալիստական կաղմակերպութիւնը, յանցանքը իմը չէ, ևս միայն կրկնեցի այս թերթի ասածը» :

Ինչպէս վերեւ ասած էի, Մոսկաւյի առաջին այցից յետոյ ես դնացի նոր - Նախիջեւան, Արմաւիր, Ստարովոլ, Թաղանրոդ, Խղար եւ Մողոտք: Այդ քաղաքներում, աւելի կամ նւազ յաջողութիւններով կարողացայ տեղային մասնաճիւղեր կազմել: Իւրայատուկ կենցաղային նմոյշներ ամէն տեղ: Խանդավառութիւնը ամէն տեղ էլ մեծ էր: Արմաւիրի ծերերը ամբողջութեամբ չէրքէզախօս էին, իսկ երիտասարդները՝ ոռուսախօս. մաքուր հայերէն խօսում էին միայն նրանք, որոնք երբեմն Մոսկաւյի Լազարեան Ճեմարանն էին սովորել կոմ շարունակում էին սովորել: Խղարում ինձ օգնեց մօրեղբայրո՞ Բժ. Ա. Մուլթան - Շահը. Երեմն, վաթսունական թւականների աղքային հակամարտութիւններում մասնակցած էր ընկերոջ Միք. Նալբանդեանցի հետ եւ «Հիւսիսափայլ»-ում աշխատկած մի երգիծական կատակերգութեամբ: Մօտ քսան տարիներ Ղղլարում բժշկութեամբ էր զբաղւած եւ քաղաքային բժիշկի պաշտօնն էր վարում: Իմանալով, որ ուզում եմ գնալ զբացի Մողոտք հայարնակ քաղաքը, բայց չունեմ ծանօթներ, նա մի յանձնարարական նամակ տւեց Մողոտքի մեծ կալւածատէր Օ.-ի անւան եւ աւելացրեց. «Օ.-ը հոչակաւոր է երեք բանով, նախ՝ ամենահարուստ կալւածատէրն է, յետոյ՝ ամէն պիտք եւ չպէտք դէպում իր «աղդասիրութեան» մասին է խօսում եւ, վերջապէս, հոչակած է այն բանով, որ երբեք, ոչ ոքին աղքային նպատակների համար փող չէ

տւած . . . եթէ կարողանաս նրանից գէթ տասը բուբլի ստանալ Յեղափոխութեան համար, ասել է թէ ութերորդ հրաշքն է կատարւած » :

Այդ խօսքերը իմ մէջ «սփոռթ»-ի նման մի մըցող զբացմունք ծնեցրին ու ես վճռեցի անպատճառ զնալ տեսնել 0.-ին. համոզւած էի, որ կը կարողանամ նրանից վերցնել «գէթ տասը բուբլի» եւ աւելի . . . :

Ղղարից Մողեռք պէտք էր կառքով զնալ. 4 - 5 ժամւայ տարածութիւն էր. մօրեղբայրս առաջարկեց իր կառքը եւ երկու ձիերը. խոստանում եմ քսանեւչորս ժամից վերադառնալ. կառքը իրեն էլ պէտք էր :

Հասնում եմ Մողեռք. այցելում եմ 0.-ին. տալիս եմ յանձնարականը. պատմում եմ գալուս նպատակը՝ ժողովարարութիւն յեղափոխական գործին համար եւ տեղային մասնաճիւղի կազմութիւն: 0.-ը մի պահ շփոթւում է. բայց իսկոյն ինչ որ ելք գտնողի պէս՝ ուրախացած բացազնչում է. «Այս բոպէիս անձամբ կանցնեմ, կը տեսնեմ մեր քաղաքի երեւելիներին եւ ժողով կը գումարենք նախկին քաղաքագլուխ Մամաջանեանի տունը» : Ի դէպս՝ Է՞րբ էք ուզում վերադառնալ Ղղար . . . :

— Վաղը լուսով պէտք է ճանապարհ ընկնեմ. խոստացել եմ . . . :

— Շա'տ լաւ, հիանալի՛. այս իրիկուն ժողովը տեղի կունենայ. ողասեցէք ինձ:

Մի քանի ժամից գալիս է եւ ուրախացած յայտնում. «Այսօր ժամը 7-ին ժողով տեղի կունենայ. երաշխաւորում եմ, որ քսան մարդ կը լինի. սուրբ գործին ո՞վ պիտի մերժէ. Աստւած բարին անէ» :

Յետոյ զառնալով ինձ ասում է. «Ճանեմ քեզ իմ աղարակը. այս տեղից մէկ ժամւայ ճանապարհ է. օդը զով, անտառներ ու լեռներ. կը տեսնէք իմ ոչխալները, կտվերն ու եղները. այստեղ կը ճաշենք. ինքս կը պատրաստեմ մատաղ ոչխարից խորոված. գինին տակառներով կեցած է, մեղ է սղասում . . . » :

Իսկապէս աղարակը մեծ եւ հարուստ էր, իսկ օդը լեռներից էր փչում. ուրախ էի, որ Մողեռքի տօթը եւ փոշին թողած էի եւ առողջ օդ էի ծծում: Ուզում եմ խօսել, բայց 0.-ը մի բոպէ իսկ չի տալիս ինձ խօսել. անդադար ինքն է ասում, ինքն է պատմում, եւ կամ աղարակը ցոյց տալու նպատակով՝ զոսով տանում է ինձ ամէն ծակ ու ծուկ՝ զետնայարկի, լճի մօտ, ախոսատուն. խօսում է իր ձիերի, կովերի, հաւերի եւ հնդկահաւերի մասին. ու մինչդեռ

դալիս էինք ճաշելու (փառաւոր սեղան), մտածում եմ. «Լա՛ւ, վերջապէս ես կը կարողանամ քեզ հետ խօսել քո տալիք գումարի մասին. ձեռքիցս չես պրծնելու»:

Հաղիւ նստած սեղանին, երբ դեռ չէինք էլ սկսած ճաշը, դալիս կանգնում է մի կառք, որի միջից իջնում է շրջանային ոռւս ոստիկանապետը:

— Ներեցէք, կարծեմ ուշացայ...

— Ո՞չ, «Հ. ձեզ էինք սպասում. ծանօթացէք...» :

Ու սկսում է ճաշը եւ ոռւսերէն խօսակցութիւնը. արաղը, գինին, զարուսէաները. նորից արաղ, նորից գինի ու խորոված: Ես համարեա թէ չեմ խմում: Սկզբում մասնակցում եմ խօսակցութեան, յետոյ տրում եմ երեկոյեան լինելիք ժողովին...: Իմ սեղանակիցները խմում են ու խմում. ժամը ցերեկայ հինգն է, է՛հ, փառք Աստուծոյ, մտածում եմ, ճաշը վերջանում է....:

— Իվան, կանչում է 0.-ը ծառաներից մէկին, պատրաստեցէք մեծ կառքը եւ հրացանները. որսի ենք դնում:

Ու ինձ դիմելով ասում է.

— Իմ բարեկամը — ցոյց տալով ոստիկանապետին — ինձ պէս որսի սիրահար է. վայրի խոզեր ունենք հարիւրներով. դուք էլ մեզ կընկերակցէ՞ք, մեծ հաճոյք կը ստանաք:

— Շնորհակալ եմ, չեմ կարող, պատասխանում եմ 0.-ի աչքերին նայելով. երեկոյեան պէտք է տեսակցութիւն ունենամ մի քանի աղդականներիս հետ...:

— Հա՛, ճիշտ է, մոռացել էի.ուրեմն դուք կամ մենակ կը գնաք քաղաք, եւ կամ ինձ սպասեցէք, կը վերադառնամ որսից եւ կը գընանք միասին. մէկ ժամից այստեղ կը լինենք. ուզո՞ւմ էք հանդըստանալ....:

— Ժամը 7-ին (ասում եմ հայերէն) ժողով ունենք, չէ՞ք ուշանալ:

— Նէ՛ք (ոչ), պատասխանում է ոռւսերէն:

Գնում են որսի: Սպասում եմ 0.-ին մի ժամ, չի վերադառնում: Մկսում եմ ջղայնանալ. վախենում եմ ուշանալ Մողղոքում նշանակւած ժողովին: Սպասում եմ մի ժամ եւս... ծառայողներից ինդրում եմ կառք տալ, որ վերադառնամ քաղաք....:

— Այս, ձեզ համար կարգադրւած է «տոոյքա»-ն (կառքը), լսում եմ զարմացմամբ:

Կարճ. մենակ վերադառնում եմ Մողղոք ժողովին, մի քիչ ուշացած. ներկայ եղողները լսում են իմ զեկոյցը Հայկական Հարցի եւ նոր դորձելակերպի մասին. ընդունում են առաջարկներս. կաղմւում

է մարմինը, լսուտանում են վաղւանից ժողովարարութեան սկսել. առնում եմ հասցէներ՝ ո՞րին եւ ի՞նչպէս հասցնել «Հնչակ»-ը:

Աւելորդ է ասել, որ 0.-ը այդ օրը չեկաւ ժողովին, ժողովարարութեան թերթից խուսափեց, եւ բազմաթիւ «կը մտածեմ - մի բան կը տամ»-ներից յետոյ, երբեք եւ ոչ մի կապէկ չաւեց, ոչ այն, ոչ էլ հետագայ տարիներին: Շատ տարիներ յետոյ մօրեղբայր» ԲԺ. Ա. Սուլթան - Շահը ինձ գրում էր. «... Պիտոյ է քեզ ասեմ, որ 0.-ը անցեալ շաբաթ աւազակ մահմետականից (նողայցիներ - լեռնականներ) գիշերը թալանւեց ու սպանւեց, իսկ դու դեռ չես հաւատում որ կայ վերին նախախանամութիւն...» :

Իմ այցը Հիւսիսային Կովկասի միւս քաղաքները՝ Թաղանոռք, Եյսկ, Եկատերինոստար, Մայկոպ, Ստալրոպոլ՝ ինձնից առին մօտ մի ամիս: Մյտ բոլոր հայրանակ վայրերում կամ ծանօթներ ունէի եւ կամ իմ ազգանունը արդէն յայտնի էր. ինձ չէին ճանաչում, բայց լուսած էին հօրս ազգանունը, որ սկսած վաթսունական թւականներից փորձառու բժշկի համբաւ էր ստացել. յաճախ այդ վայրերից Նոր - Նախիջևան էին գնում բժշկւելու: Լսած էին նոյնպէս, որ բժիշկ Յ. Բերբերեանը եօթ մանչ զաւակ ունի եւ մի աղջիկ. փորձում էին բժշկից իմանալ այդ «գաղտնիքը», մանաւանդ նրանք, որոնք ունին 6 - 7 աղջիկ զաւակ եւ ոչ մի մանչ տղայ...»:

Իբրեւ վերջին հանգրւան ընտրել էի իմ հայրենի Նոր - Նախիջևանը, որպէսզի մի ամիս հանգստանալուց եւ ծնողներիս հետ մը նալուց յետոյ վերադառնամ ժընեւ: Այդպէս էլ արի: Եթէ մի պահ մի քանի քաղաքների վրա կանգ առի, նպատակս էր ցոյց տալ մի քանի կենցաղային բարքեր, բայց գլխաւորը — որ ամէն տեղ մթնոլորտը պատրաստ գտայ: Նախկին տասը — քսան տարիների ընթացքում կաթիլ առ կաթիլ ազգային կեանքի յոյզերը, թերեւս արցունքները ընկել էին այն անօթի մէջ, որ այսօր հասած էր արդէն եղրին:

Աւելորդ չեմ համարում, գէթ ամենաամփոփ կերպով յիշատակելու եւ այն մէծ ոգեւորութիւնը եւ իւրայատուկ արտայայտութիւնը, որ ցոյց էր տալիս Ռաֆայէլ Պատկանեանը (Գամառ - Քաթիսկա) այդ տարին: 1891 թ. Հայոց ազգային բանաստեղծը հաղիւ կոխած էր 61 տարիքը. ինքն էլ, մենք էլ համարում էինք նրան «ծերունի» :

Երբ ամառը վերադարձայ իմ հայրենի կտուրի տակ, մերոնք արդէն քաղաքի ծայրը գտնւած ամտանոցն էին տեղափոխել. դա նշանաւոր «Բերբերովենց պաղչան» էր. մօտ երեսուն հեկտար տարսածութեան վրա փուած էին հազարաւոր ծառեր զանազան մրգերի՝ կեռասի, ինձորի, տանձի, աալորի, դեղձի, ալիշայի, ընկոյլի. այդ «ողաղչայի» մէջ շինւած էին երեք փայտէ տներ. հողը օժտւած էր

Ջրհորների հիանալի ջրով։ Հայրս սիրահար էր պարտէզի ու կանաչի։ Քաղաքին կից ուրիշ մեծ պարտէզներ չկային ու քաղաքի համեստ խաւերի համար մի տեսակ աւանդութիւն էր ամէն տարի մայիսի հօթին գնալ «Բերբերովենց պաղչան» եւ ամբողջ օրը այնտեղ մնալ ու նոր հասած թարմ սէթրին փետել։ Մեր ընտանիքը ամառը այնտեղ էր տեղափոխուում։ Հայրս թոյլ էր տւել նոյնպէս, որ ուսանող եղբայրներս Մոսկալայից վերադառնալով հետերնին բերեն իրենց մտերիմ ընկերներին։ Դեռ ութունական թւականների վերջերին Մոսկալայից Անդրկովկաս վերադարձող շատ հայ ուսանողներ եկել ապրել էին այդ պաղչայում՝ Յովհաննէս Յովհաննէս բանաստեղծը, Մկրտիչ Բարխուդարեանը (Խմբագիր՝ «Հանդէս Գրականութեան եւ Պատմութեան») եւ շատ ուրիշները։ Երբ Նոր - Նախիջեւան վերադարձայ, մեր պաղչայում արդէն ապրում էին բանաստեղծ Ալ. Յատուրեանը, Իւրիյ Վեսելովսկին^{*)}։ Նրանց իր հետն էր բերել Մոսկալայից Մինաս եղբայրս։

Սրանք յաճախ այցելում էին Նոր - Նախիջեւանում ապրող Ռ. Պատկանեանին։ Վերջինս նրանցից լսած էր, որ Ժընեւից եմ եկել եւ ցանկութիւն էր յայտնել, որ գնամ իրեն տեսնեմ։ Ես արդէն առանց այն էլ պիտի այցելէի, քանի որ աշակերտական տարիներիս իր որդիներից մէկի հետ ժամանակ էի անցկացնում նրա տան ու պարտէզի մէջ։ Բացի այդ՝ Նաղարբէկը խնդրած էր, որ իր կողմից մի օրինակ Լեռենցի «Բանաստեղծութիւններ» հատորը իրրեւ նւէր յանձնեմ մեր աղջային բանաստեղծին։ Զարմանալի զուգագիպութեամբ, ինչպէս եւ բանաստեղծ Մըբատ Շահաղիզեանը, Ռափայէլ Պատկանեանն էլ, ինձ յայտնեց, որ Հայ Յեղափոխութեան առաջին ցոյցերից սկսած, նա զգում է իրեն երիտասարդացած։ «Զարմանալի» բան, առում էր Ռ. Պատկանեանը, այս վերջին տարին այնքա՞ն եռ է դալիս արիւնս... մեր սերունդը գրչի ճոխնչով ապրեց, ձերը պիտի ապրի թնդանօթի գոռիւնով։ ա՛հ, երանի ձեզ»...։

— Անշուշտ Հայ Յեղափոխութիւնը շատ զոհեր պիտի պահանջէ...։

— Ասա ընկերներիդ, — պատասխանում է ծերունի բանաստեղծը — որ Վարդան Մամիկոնեանը ասել է՝ «Ճղե՛րք, մահը ընկերով հարսնիք է...»։

Ռ. Պատկանեանին, ինչպէս եւ ոռւսահայ բոլոր քիչ թէ շատ աչքի ընկնող աղջային դէմքերին «Ճնչակ» թերթը վերջին երկու - ե-

*) Մի ամառ ապրել է նոյնպէս մեր մտերիմ քարեկամ (տրապիզոնցի) տաղանդաւոր Ակարիչ Արշակ Ֆերվանեամը, որը ներկայաւմս Ամերիկայումն է գտնուում։

բեք տարին ուղարկւում էր ձրի, նամակի ձեւով, պահարանի մէջ։ Որքան յիշում եմ, այդ տեսակ ծրարներ ուղարկւում էին 15 - 20 հատ։ ստանում էր մինչեւ իսկ Կաթուղիկոսը, որը կարդալուց յետոյ տալիս էր իր մտերմներից մէկին, (միամիտ ձեւացած) «ասիկա ո՞վ է խրկած»։ Այդպէս էր պատմում ինձ մի օր իմ համաքաղաքացի երիտասարդ Լեւոն վարդապետ Խոճայեանը։ Ու. Պատկանեանին էլ ուղարկւում էր «Հնչակ»-ը եւ նա իրազեկ էր յեղափոխական ընթացքին։ Իմ այցելութիւնս արգէն վերջացրել էի եւ գլխարկս զրած՝ երբ Ռ. Պատկանեանը իր խորաթափանց հայեացքը աչքերիս ուղղելով՝ շարցրեց։

— Ուրեմն դու ասում ես, որ ըստ ձեր կուսակցութեան ունեցած տևալներին, հայութեան մէծամասնութիւնը համակրո՞ւմ է Հայ Յեղափոխութեան։

— Համոզւած եմ . . . :

— «Համոզւա՞ծ» ես, թէ՞ «Հաւատացած» . . . : Ասա ինձ հետեւեալը. քո պատմած այս բոլոր հայաբնակ քաղաքներում մօտաւորապէս ո՞րքան թւով հայութիւն կայ ընդամենը։

— Մօտաւորապէս՝ Պետերբուրգ - Մոսկվա 5 - 6 հազար։

— Սոցա ո՞ր մասը քո հրաւիրած ժողովներին եկաւ։

— Մօտ երկու հարիւր . . . :

— Ասել է՝ երեք - չորս տոկոս . . . Մեր Նոր - Նախինջւանում ու գիւղերում հայերի թիւը գիտե՞ս։

— Այո՛, քաղաքում մօտ քսան հազար, գիւղերում 13 - 15 հազար։

— Ո՞րքան թւով անդամներ ունէք, որ ձեզ պիտի համակրին, կամ հետաքրքրւեն ձեր գործունէութեամբ։

— Քաղաքում մօտ 250, գիւղերում երեւի մօտ 50 մարդ. բայց (զգում եմ, որ նեղ տեղն եմ ընկնում) սա դեռ գործի սկիզբն է, կաւլանան ապագայում։

— Հա՞՛, ուրեմն տեղիս հայութեան միայն մէկ տոկոսն է «գիւտակից» ճանաչւած։ Լսիր, աղքասէրների այս թիւը, ի հարկէ, համեմատաբար աւելի միիթարական է, քան թէ ինչ որ ես տեսած եմ մի քանի տարի առաջ Հայաստանում եւ Պոլում. այն ժամանակները մատով պէտք էր համրել, ու ես չէի յուսահատում . . . բայց այս էլ քեզ ասեմ՝ մինչեւ որ մեր հայութեան տասը տոկոսը անկեղծօրէն (այն էլ բոլոր խաւերէն առած) ձեր կողմը չանցնի, ինքներդ ձեզ «Համոզւած» մի կարծէք, որ գործի ապաղայ յաջողութիւնը ձեր կողմն է. երբեք չհիասթափէք, բայց երբեք էլ չմոռանաք, դու եւ քո ընկերները, որ թւերը յաճախ ճակատագրական են . . . :

Վերադառնում էի տուն ու մտածում՝ «սխալում է ծերունին... Յեղափոխութիւնը կախւած չէ թւերից...» :

Ես, ի հարկէ, պատրանքների մէջ էի ընկած :

Զնայած, որ իր սեփական երկրում մարդարէն ոյժ չունի, կամ անտեսում է, Նոր - Նախիջեւանում ինձ յաջողւեց երեք մարմին կազմել՝ «Կանանց եւ Օրիորդների», «Ռւսանողների» եւ Ռւսուցիչների» եւ «Հէզոք մարդկանց»: Վերջինս վաճառականներից եւ հասակւոր մտաւորական խաւերից էր բաղկացած: Այդ երեք մարմիններից ամենաբեղմնաւոր գործունէութիւնը ցոյց տւեց «Կանանց եւ Օրիորդների» մասնաճիւղը, որը զեկավարում էր Օլ. Թագուհի Քրասինիքեանը՝ հետազոտմ իմ ամուսինը:

Չսպասած տեղից՝ Նոր - Նախիջեւանում ստանում եմ մէկը միւսի ետեւից երկու ծածկադիր եւ գաղտնի մելանով գրած նամակներ Նաղարբէկից: Առաջինում մեծ գոհունակութիւն էր յայտնում Պետերբուրգի եւ Մոսկվայի «յաջողութեան» համար եւ խնդրում ինձ անմիջապէտ մեկնել Թիֆլիս եւ Ղաղարս Աղայեանցի հետ միասին այցելել Անդրկովկասեան մի քանի քաղաքները. իսկ երկրորդ նամակում, — երկու օր յետոյ ձգւած — խնդրում էր չեղեալ համարել առաջին նամակը, «տանը նստել եւ կազդուրել», որովհետեւ «համաճարակ հիւանդութիւն է սկսել Թիֆլիսում եւ առհասարակ, վախենում եմ, որ գու էլ չհիւանդանաս»: Այլ խօսքով՝ հաղորդում էր, որ ձերբակալութիւններ են եղած Թիֆլիսում:

Ես արդէն լրած էի այդ օրերը, որ խսկապէս տեղի են ունեցած, գարնան ամիսներից սկսած, մի շարք ձերբակալութիւններ դաշնակցականներից շարքում. ձերբակալւած եւ աքսորւած էին Կովկասի սահմաններից այլ կուսակցութեան ամենականաւոր գործիչները՝ Քր. Միքայէլեան եւ ուրիշները: Մանրամասն տեղեկութիւններ չունէի, բայց զդում էի, որ մի առ ժամանակ պէտք է հանդիստ մնալ ու վերակառնալ Ժընե: Ակամայից յիշեգի այն ծրագիրը, ըստ ուրի անցեալ տարի Թիֆլիսում Ո. Խանաղատին առաջարկել էին, որ «միացւելիք երկու Յեղափոխական Կուսակցութիւնների գլխաւոր կենտրոնը մնայ Անդրկովկասի սահմաններում, իսկ «Հնչակ»-ը շարունակւի Ժընեուում հրատարակւել «հարստացւած նոր ուժերով Նաղարբէկի խմբագրութեան տակ»: Մտածում եմ, «ուրեմն եթէ դեռ գործը հազիւ սկսւած, ուռւ կառավարութիւնը արդէն ձերբակալեց վարիչ յեղափոխական հայ ոյժերը, էլ լինչ վիճակի մէջ կարող էր դտնել նոր կենտրոնը, եթէ Անդրկովկասի սահմաններում հաստատւած լինէր ու այդ տեղից զեկավարէր ...» :

(Նարունակելի)